

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Հ.Թումանյանի անվան

սլետական համալսարան» ՊՈԱԿ-ի

ռեկտորի 30.05.2016 թ. թիվ 342 Լ/Կ հրամանի

ԿԱՐԳ

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՍՍՈՒՆՔԻ ՄՐՑՈՒՑԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ,  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտխորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 5 26.05.2016թ.

Փոփոխվել է՝

Արձանագրություն թիվ 2 27.02.2020թ.

Վանաձոր

2016թ.

## **1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1.1. Սույն կարգը սահմանում է պետական և ոչ պետական հանրակրթական և ավագ դպրոցների ու վարժարանների աշակերտների շրջանում ասմունքի մրցույթի կազմակերպման, անցկացման, արդյունքների ամփոփման կարգը:

## **2. ՄՐՑՈՒՅԹԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

2.1. Մրցույթի անցկացման հիմնական նպատակներն են.

- բացահայտել տաղանդավոր երեխաներին, նպաստել նրանց մասնագիտական կողմնորոշմանը,

-նպաստել դպրոցականների ստեղծագործական մտածելակերպի զարգացմանը,

-նպաստել գրականության, գրքի միջոցով դպրոցականների մշակութային դաստիարակությանը:

2.2. Մրցույթի անցկացման հիմնական խնդիրներն են.

- հնարավորություն ընձեռել դպրոցականներին դրսևորելու իրենց կարողությունները՝ գեղարվեստական խոսքի ներկայացման միջոցով,

- խթանել և զարգացնել աշակերտների հետաքրքրությունն ընթերցանության, մասնավորապես գրականության նկատմամբ,

- նպաստել հոգևոր, բարոյական արժեքների զարգացմանը, գեղագիտական և գրական ճաշակի ձևավորմանը:

## **3. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

3.1. Մրցույթին կարող են մասնակցել պետական և ոչ պետական հանրակրթական և ավագ դպրոցների ու վարժարանների աշակերտները:

3.2. Մրցույթի կազմակերպման, մեթոդական ապահովման, ելույթների քննարկման, հաղթողներին և մրցանակակիրներին որոշելու նպատակով մրցույթի անցկացման ժամկետից 1 ամիս առաջ համագործակցության և կապերի բաժնի վարիչի առաջադրմամբ Համալսարանի ռեկտորի հրամանով ստեղծվում է հանձնաժողով:

3.3. Մրցույթի անցկացման ժամկետից առնվազն 1 ամիս առաջ համագործակցության և կապերի բաժինը տեղեկացնում է դպրոցներին կազմակերպվող մրցույթի մասին՝ նշելով մրցույթի անցկացման ստույգ ժամկետը և անհրաժեշտ պայմանները: Տեղեկատվությունը տեղադրվում է նաև Համալսարանի կայքում:

3.4. Հայտարարված ժամկետի ավարտից հետո մասնակցության հայտեր չեն ընդունվում:

#### **4. ԱՍՄՈՒՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

4.1. Ասմունքը գնահատվում է հանձնաժողովի կողմից 20 բալանոց համակարգով՝ ըստ միավորների (ըստ Հավելվածի):

#### **5. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ**

5.1. Մրցույթի մրցանակակիրներ են համարվում այն դպրոցականները, որոնց ասմունքը գնահատվել է.

20 միավոր՝ 1-ին կարգի դիպլոմ,

19 միավոր՝ 2-րդ կարգի դիպլոմ,

18 միավոր՝ 3-րդ կարգի դիպլոմ,

5.2. Մրցութային հանձնաժողովի որոշմամբ առանձին մասնակիցներ կարող են արժանանալ նաև հատուկ կամ խրախուսական մրցանակի:

5.3. Մրցույթի հաղթողները, հատուկ ու խրախուսական մրցանակների արժանացած դպրոցականները պարգևատրվում են դիպլոմներով, շնորհակալագրերով:

## Հավելված

Ասմունքի գնահատման հիմնական չափանիշներն են.

- գրական երկի ընտրությունը` 4 միավոր,
- ասմունքողի գեղարվեստական խոսքը` 10 միավոր,
- խոսքի տեխնիկան` 6 միավոր: